

ԱՋԳԱՅԻՆ

Ամսոյս 8 - ին Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Մա-
կար Արքայնագոյն Վաթուղիկոսն յաջողութեամբն Աստուծոյ ե-
պիսկոպոսական ձեռնադրութիւն կատարեց: Ձեռնադրեալքն էին
Մայր Աթոսոյս միաբաններից՝ Արժ. Հարք Սարգիս վարդապետ
Տէր Գասպարեան, Կարապետ վարդապետ Տէր Գալստեան, Արիս-
տակէս վարդապետ Գաւթեան, Մամբրէ վարդապետ Սանասու-
րեան և Կարապետ ծ. վարդապետ Այվազեան. Տաճկաստանի վի-
ճակաց առաջնորդներից, ըստ վկայութեան իրանց ժողովրդեան և
յանձնարարականի պատրիարքարանին Կ. Պօլսոյ, Արժ. Հարք՝ Մա-
ղարիա ծ. վարդապետ Օրմանեան՝ Կարնոյ, Յովհաննէս ծ. վարդա-
պետ՝ Ալաշկերտու, Գարեգին ծ. վարդապետ Արուստանեան՝ Տրա-
պիզօնի և Ստեփաննոս ծ. վարդապետ Յովակիմեան՝ Նիկոմիդիոյ:
Նորհաճաւորելով նորապսակ Արքայն Հարց եպիսկոպոսական
բարձր աստիճանն՝ ազօթումենք առ Աստուած, որ լինին նորա ար-
դարեւ մշակ սյգւոյն Քրիստոսի՝ Հայաստանեայցս սուրբ եկեղե-
ցւոյ, ջերմեռանդութեամբ իրանց անձը դնելով իրանց հաւա-
տացեալ ժողովրդեան և եկեղեցւոյ վերայ:

Առաջին Յարութեան Կիրակէից (ամսոյս 8 ից) սկսեալ մինչև
միւսնորհնութեան օրը ամբողջ մի շաբաթ ազգային տօն լինե-
լով զանազան հեռաւոր տեղերից եկած ուխտաւորները հոգեպէս
մխիթարվումէին մասնակցելով տօներին: Այդ մի շաբաթի ըն-
թացքում՝ նորա տեսան եպիսկոպոսի ձեռնադրութեան վսեմ
արարողութիւնը, Ս. Հռիփսիմէի տօնի օրը՝ ամսոյս 9 ին միաբա-
նութեանս հետ գնացին Ս. Հռիփսիմէի վանքը Ս. Պատարագ տես-
նելու և ուխտ անելու, ուր կատարուեց հոգեհանգիստ բոլոր
հայ ազգի և մանաւանդ Ս. Հռիփսիմէի վանքի բարերար ննջե-
ցելոց համար:

Հեռեկալ օրը ամսոյս 10 ին Ա. Փայիանէի տօնին՝ գնացին Ս.
Փայիանէի վանքը, ուր պատարագից յետոյ հանգստեան պաշտօն
կատարուեց Ս. Փայիանէի վանքի բարերարների հոգւոյ և Հան-
գուցեալ Մատթէոս կաթողիկոսի համար:

Հինգշաբթի օրը ամսոյս 12 ին, ի տօնի Ս. Յովհաննու Կարա-

պետի և Աթանազինէ եպիսկոպոսի, ըստ սուրբութեան թէ և միաբանութիւնս և ուխտաւորք պէտք է Շողակաթի վանքում (ուր են յիշեալ սրբոց մատուցները) Ա. պատարագ տեսնէին, բայց ըստ կանխագոյն հաճութեան Ա. հօտաւ կաթուղիկոսի Նիկոմիդիոյ Գեր. Ստեփաննոս եպիսկոպոսը Մայր Տաճարում պատարագեց, որից յետոյ ըստ խնդրոյ այս տարի ձեմարանի գասընթացքը աւարտողներին՝ հոգեհանգստեան պաշտօն կատարուեց Հանգ. Վէորգ Գ. կաթուղիկոսի գերեզմանի վերայ խաւան բաղմութեան ներկայութեամբ:

Այս տարի ձեմարանի գասընթացքը աւարտեցին՝ Կորիւն Մըկրրոյեան՝ Մշեցի, Արեգնագոյ Ալէքսանեան՝ Թաւրիգեցի, Նիկոգայոս Մելիք - Թանգեան՝ Բռնակոթցի (Սիւնեաց վիճակ), Գաւիթ Յարութիւնեան Քաջարանցցի (Սիւնեաց վիճակ), և Սարգիս Թանագեան՝ Զալալօղլեցի: Հոգեհանգստեան ժամանակ ուսումնաւարտներէց մինը զգացմամբ լի մի ծառ կարգաց. գովումենք ուսումնաւարտ երիտասարդների երախտագիտական զգացմունքը գէպի ձեմարանի հիմնագիր հանգուցեալ ի Տէր Վէորգ Գ. և աղօթումենք առ Աստուած, որ նոյն երախտագիտական զգացումը յարատե և անշէջ մնայ նոցա զգայուն սրտերի մէջ և գէպի Մայր Աթոռս, որի մայրական խնամքը թէ ըստ նիւթականին և թէ ըստ բարոյականին՝ վայելեցին յընթացս իրանց ուսումնառութեան:

Նախընթաց տօները խսկապէս մի նախատանակ էին խսկական տօնին, որ պիտի կատարուէր Ա. Միւսօնի օրհնութեամբ:

Ամսոյս 15 - ին ի տօնի Շողակաթի Ա. Էջմիածնի, ըստ յառաջագոյն որոշման և յայտարարութեան, Ա. հօտաւ Հայրապեան ազգիս յաջողութեամբն Աստուծոյ սուրբ միւսօն օրհնեց ի ներկայութեան այլ և այլ տեղերից խմբուած բաղմաթիւ քերականներն և բարեպաշտ ուխտաւորաց:

Միւսօնօրհնութեան նախընթաց երեկոյեան՝ Նորին Ա. հօտաւ ութիւնն եկեղեցական թափօրով եկաւ եկեղեցի օրհնելով շուրջանակի համախմբեալ ժողովրդեանը, սրանք խոնտած էին վանքի գաւթում տանեաց և մինչև անգամ ծառերի վերայ: Կարգ էին պահպանում նրեանից բերուած զինուորները իրանց սպաների առաջնորդութեամբ երկու կարգ սրանէջ կանգնելով Ա. հօտարանի

դռնից մինչև Տաճարի դուռը: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ կատարուեց ցայգապաշտօն մինչև «Հարց»ը: Առաւօտեան ժամերգութիւնից յետոյ ժամը 6-ին սկսուեց Ս. պատարագը: Նորին Աեհափառութիւնն, որ էր նաև աւուր պատարագիչն, Աեհարանում զգեստաւորուած երկոտասան եպիսկոպոսաց նախընթացութեամբ, որք կրումէին սուրբ միւռօնի օրհնութեան յատկացի ալ սրբութիւնները, եկեղեցական շքեղ թափօրով եկաւ եկեղեցի և սկսուեց սուրբ պատարագը: Երկոտասան եպիսկոպոսոք սեղանի վերայ, յաջմէ և յահեկէ Նորին Աեհափառութեան զգեստաւորեալ կանգնած էին: Սուրբ պատարագը շարունակուեց մինչև «Ողջոյն»ը, այնուհետև Նորին Աեհափառութիւնն գառնալով զէպի սուրբ միւռօնի կաթսան շրջապատեալ եպիսկոպոսներով երեսաւ ժողովուրդն, սկսեց միւռօնի օրհնութիւնը. ժողովրդեան զմայլմանը և հոգեկան բերկրութեանը չափ չկար, որ արտայայտումէր խուլ մնչմամբ: Ի ձայն զանգահարութեանց կատարուեց սուրբ միւռօնի օրհնութիւնը: Նորին Աեհափառութիւնն համբարեւելով ս. միւռօնի կաթսան՝ զարձաւ շարունակել ս. պատարագը ողջոյնը հաղորդելով ջերմեռանդն ժամաւորաց: Պատարագը աւարտելուց յետոյ Աեհափառ Հայրապետը զարձեալ զգեստաւորուած երկոտասան եպիսկոպոսաց նախընթացութեամբ եկեղեցական թափօրով վերադարձաւ: Աեհարան օրհնելով խրանեալ ժողովրդեանը, այնուհետև ուխտաւորք սկսան համբարել ս. միւռօնի կաթսան առանձին իմն ջերմեռանդութեամբ և անժայտ ոգևորութեամբ:

Սուրբ Միւռօնի օրհնութեան օրը եղանակը անհամեմատ զով էր և խոնեալ բազմութիւնը հոգեկան մխիթարութիւնից յետոյ, մխիթարութիւնը զինուորական երաժշտութեան ունկնդրութեամբ: Ս. պատարագից յետոյ միաբանութեան սեղանում ծառայողները բազմութիւ պատուաւոր հիւրերին, և Կեր Տ. Գարեգին Եպիսկոպոս Արուանձտեան ատենարանից ըստ խորհրդոյ աւուրն սր էր Ս. Էջմիածնի տօնը և ս. Միւռօնի օրհնութիւնը:

Ինչպէս նախընթաց նոյնպէս և այս երեկոյեան ծրագալոյց կարևոր և ձեմարանի երգեցիկ աշակերտք ու զինուորական երաժշտութիւնը փոխիտակի երգելով ու նուագելով մեծ բաւականութիւն էին պատճառում ուխտաւորաց: Մեծ և հոգեզմայլ տաւաորութիւն գործեց աշակերաների հանգստեան աշօխարհը, որ կատար-

րուից զանգակոտան առաջ. ժողովուրդը խորին ունկնդրութեամբ աջօթակից եղաւ:

Տաճկաստանի առաջնորդք Ս. միւռօնի օրհնութիւնից յետոյ հրաժեշտ ապրով Մայր Աթոռոյ՝ վերադարձան: Գեր. Հարրեպիսիոպոսուէք՝ Յովհաննէս, Գարեգին և Ստեփաննոս իրանց վիճակները ուղեորուելիս, իսկ Մաղաքիա՝ ըստ ստիպողական առաջադրութեան պատրիարքարանի՝ գնաց Վան, տեղւոյն աչգային գործերը կարգի գնելու և Աղթամարայ Սրբազան կաթողիկոսից գողայած գրամոց գործը քննելու:

Ամսոյս 7 - ին «Ազրիւր» մանկական ամսաթերթի խմբագիր Մեծ. Պ. Տիգրան Նազարեանց գալով Մայր Աթոռս, ներկայացրեց Վեհափառ Հայրապետի ազգիս Նուշեցի բարեպաշտ տիկին Մարգարիտ Ալէքսանեանի ինքնաձեռագիր, ընտիր արձաթակագով Աւետարանը, որ 19 - րդ դարուս մէջ, հայկական շրջանում հրաշալիք է համբերութեան, տակունութեան և ջերմեանդութեան, իւր նուրբ և բազմարուեստ գրչութեամբն: Աջօթումենք, որ այգօրինակ դէպի Ս. Էջմիածին ջերմեանդն տիկնայք հազարս որ թուով համարուեն, որովհետև կինը ինչ որ իւր քնքոյշ մտանքով և փափուկ զգացմամբ միժամուայ մէջ կարող է անել, այր մարդը շատ անգամ չի կարող տարիների ընթացքում: Անջ գործը ոգևորութիւն է պատճառում, իսկ մարդունը՝ քննադատութիւն: Աւրախութեամբ կը հրատարակենք հետեւեալ ամսաթերթում յիշեալ Աւետարանի յիշատակարանը մանրամասնարար խօսելով գրչութեան մասին:

Ամսոյս 14 - ին Աղէքսանդրապօլի Վիճ. գպրոցի ուսուցիչ Մեծ. Պ. Մակար Տէր Սարգսեան անձամբ գալով Մայր Աթոռս՝ ի շնորհաւորութիւն օօնի Աթթուղիէ Էջմիածնի ներկայացրեց Նորին Վեհափառութեան իւր բարեպաշտ ամուսնոյ Տիկին Աշխէն Տէր Սարգսեանի ձեռագործած Ս. Էջմիածնի նկարը: Այս ձեռագործը պատրաստուած է մեծ հմտութեամբ, ներդաշնակ համաչափութեամբ և լուսանկարչական ճշտութեամբ, որի ծաւալն է երկայնութեամբ երեք արշին և լայնութեամբ 2 արշին 4 վերջոկ: Տիկին Աշխէն Տէր Սարգսեան, որ բազմամեայ վարժուհին է եղել

Աղէ քսանդրապօլու Սահականուշեան Օրիորդաց Հոգևոր գարոցի այս ձեռագործի վերայ փայլեցրել է այն բոլոր հմուտ թիւնները, որոնք վերաբերում են ձեռագործութեան գեղարուեստին: Գովում ենք բարեպաշտ տիկնոջ ջերմեանդ տիկնու Սայր Աթուռ և որդիական զգացումները առ Վեհափառ Հայրապետան, որ արտայայտած է իր շքեղարուեստ ձեռագործով:

Քաղաքագլուխն և նախագահն խորհրդարանի հոգարարձուաց Նոր-Նախիջևանի օրիորդաց պրօգիմնադիպային պ. Գրիգոր Ավթիբեան յանուն Վեհափառ Հայրապետի ուղարկել էր մի զոյգ հոգաթափոյ որ առաջնորդութեամբ գիմնադիանի Տեսչուհի համեստափայլ Աղետպարտա Վերասիմոյա Ալիգէնայի ընտիր թաւիշի վերայ մարգարտով յեւեալ ձեռագործել են գիմնադիանի աշակերտուհիք ինչան ջերմեանդն զգացման առ Սայր Աթուռ և որդիական սիրոյ առ Վեհափառ Հայրապետան:

Հոգաթափոնի վերայ ձեռացրած է Մասիս լեւոն տապանը վերան և տպանին՝ ձիթենույ ճիւղը բերանին:

Գովում ենք յիշեալ գարոցական վարչութեան քանքր իւր սաների մէջ սոյն օրինակ կրօնական եռանդն զօրացնելուն համար:

Ս. Միւսոնի օրհնութեան առիթով Բագու արնակ Մեծ. Պ. Առաքել Մատուրեան եկած լինելով Սայր Աթուռ՝ բացի գարրատից և այլ նուէրներից՝ 300 բուրլի նուիրեց ի նպաստ ձեմորանի և 300 բուրլի ևս ի նպաստ շինութեան Սայր Աթուռոյս. Աստուած վարձահատոյց լինի յիշեալ առատաձեռն Պարոնին բոտ հոգոյ և ըստ մարմնոյ աստ և ի հոնգերձելումն:

Մեծապատիւ Պ. Ներսէս Տէր Ներսէսեանց յանուն Վեհափառ Հայրապետի ի նպաստ շինութեան Սայր Աթուռոյս իւր ճնարոց յիշատակի համար ուղարկել էր երկու հարիւր բուրլի իսկ Նոր-Նախիջևանի Ս. Լուսաօրից առաջ եկեղեցւոյ միաբան բարեկրօն Սարգիս քահանայ Ասկերեան Ս. Միւսոնի օրհնութեան առիթով անձամբ գալով Սայր Աթուռ և ներկայանալով Նորին Վեհափառութեան մատուցել է մի հարիւր բուրլանոց մի բանկային բիլէթ 1881 ամի № 81671 ինն կուպօնիք ի նպաստ ծախուց Սայր Աթուռոյս: Վեհափառ Հայրապետան առաջարկելով Սինօղին թէ պ. Ներսիսեանի 200 բուրլին և թէ բարեկրօն Սարգիս քահանայի մի հարիւր բուրլին պատուիրեց անօրինել զարժանանգորրեցնելով յիշեալ նուիրատու բարեսէր անձինքը:

Ամսոյս 21 - ին ի ասօնի Ա. Ներսիսի Մեծի Հայրապետի և Խաչայ եպիսկոպոսի Ա. Նահապետ Հայրապետան Ազգիս Ա. պատարագին ներկայ գտնուելուց յետոյ եկեղեցու ուխտի հետ շուրջաստուրեայ և այլ սպասուք հանգուցիալ Ներսէս կաթողիկոսի գերեզմանի վերայ հոգեհանգստեան պաշտօն կատարեց, խուռն բողմութեան ներկայութեամբ՝ որ զանազան տեղերից եկած էին Ա. Միսոնի կաթողիկոս համբուրելու և եթէ չենք սխալվում ուխտաւորաց բողմութիւնը աւելի քան 1/4ը կըլինէր միւսոնորհնութեան օրուայ:

ՕՐԱԳԻՐ

ՀԱՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՈՒՄԻՆԻՍՏՆԵՐԻ ԸՆԴՆԵՐՈՒԹԵԱՆ.

1886 թ. Մայիսի 4 - ն Մոզնոյ Ա. Գէորգ եկեղեցոյ Ա. Գալիանեան օրհորդաց Ա. սուսնարանի գահաժողովը նախագահութեամբ արժանապատիւ Յարութիւն տալ քահանայ Սուգանաճեանի, կայացաւ Հայոց հասցեագործական Ընկերութեան ընդհանուր ժողովը, ժողովին ներկայ էին Ընկերութեան 36 անդամ:

Սոյն ժողովին ընկերութեան վարչութիւնը՝ համաձայն կանոնադրութեան 29 յօդուածի ներկայացրեց ի քննութիւն և ի հաստատութիւն 1885 թ. ելև մտից հաշիւը, Սոյն հաշիւը քննելուց ստաջ վարչութեան անդամ տիկ. Սրբուհի Երեցեանը կարդաց վարչութեան միտմայ գործունէութեան տեղեկագիրը, որից երևեցաւ որ տարուայ սկզբներին քանի որ Հայոց ծխական ուսումնարանները բաց էին, վարչութիւնը չէր դադարում կանոնադրութեամբ իրան դժադրած դերը անթերի կատարելուց բայց նրանց փակելուց յետոյ նա ենթարկուեցաւ անգործունէութեան տաղտկալի վիճակին: Աւարչութեան այս չէզոք դրութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ և ընկերութեան նիւթական միջոցների վերայ, որովհետև նա չկարողացաւ հրատարակել ոչ մի նոր մշտական անդամ, չունեցաւ բաւարար թւով տարեկան անդամներ և չը վստահացաւ կանոնադրութեամբ իրան թողարկուած պարահանդէսներ և կ՛օճեցեաներ կազմել, Տեղեկագրից երևեցաւ որ թէև հաշուի մէջ նշանակուած է տարեկան 60 անդամների վճարը, իսկ նրանց անուանացուցակում աւելացրած են 9 անդամ ևս, բայց սրանց անունները ստացուած են ուշ՝ հաշիւը պատրաստելուց յետոյ, ուստի վերջին 9 անդամներից ստացած վճարը վարչութիւնը անաջիկայ հաշուի մէջ կը մտցնէ ի շարս ընծայարկութիւնների:

Վարչութիւնը 1886 թ. համար նախահաշիւ չկազմեց որովհետև մինչև այժմ որոշուած չէ հայոց զպրոցների խնդիրը, ուստի մտադիր է մի արտաքոյ կարգի ընդհանուր ժողով հրատարակել երբ այդ խնդիրը կորոշուի:

Վարչութիւնը ցաւ յայտնեց իւր բաղձաշխատ անդամ՝ օրհորդ Նատալիա Տէր Յովհաննիսեանի մահուան մասին, աւելացնելով որ հանգուցելոյ յուղարկութեան օխուր հանդէսը նա սրբազան պարտք համարեց պատուելու:

Ընտրահետև վարչութեան ստաջարկութեան համաձայն՝ ընդհանուր ժողովը հաստատեց 1885 թ. ելև մտից հաշիւը և որոշեց ստաջարկել նորան ի քննութիւն և ի հաստատութիւն նախահաշիւն՝ երբ Հայոց զպրոցների խնդիրը կորոշուի, իսկ մինչև այդ ժամանակ վարչութեան ընթացիկ ծախսները անել ընկերութեան գումարներից այն չափով որ որոշուած է կանոնադրութեան 17 յօդուածի ա. կետի մէջ:

Յետոյ ընդհանուր ժողովը զրազուեցաւ վարչութեան նոր կազմակերպութեամբ, որովհետև չորս տարի լրանալու պատճառով, վարչութիւնից դուրս